

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/7

18 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արթուր Դավթյանի 18.06.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ պետի 08.06.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284790 որոշման դեմ:

Ա/Ձ Արթուր Դավթյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Արթուր Դավթյանը հայտնում է, որ 04.02.2015թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր, բայց հարկային տեսչությունում հայտարարություն գործունեության սկսման և/կամ դադարեցման վերաբերյալ մինչ օրս չի ներկայացրել, փաստացի գործունեություն չի իրականացրել, հաշվետվություններ (այդ թվում՝ զրոյական) չի ներկայացրել:

08.06.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284790 որոշմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով Ա/Ձ Արթուր Դավթյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 15.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արթուր Դավթյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ պետի 08.06.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284790 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արթուր Դավթյանը 2015 թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացնելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 15.000 դրամ:

Նշվեց նաև, որ Ա/Ձ Արթուր Դավթյանը 04.02.2015թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր և նույն օրը հաշվառվել ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ-ում: Սակայն, հաշվառման պահից փաստացի գործունեություն չի իրականացրել և հաշվետվություններ (այդ թվում՝ զրոյական) չի ներկայացրել:

Հանձնաժողովը գտնում է, որ նման պայմաններում Ա/Ձ Արթուր Դավթյանը 2015 թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի ունեցել, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 30.09.2008 թ-ի «Հարկ վճարողների (ապահովագրիչների) կողմից գործունեություն չիրականացնելու դեպքում հարկային

մարմնին հաշվարկների, հաշվետվությունների և հայտարարագրերի ներկայացման վերաբերյալ» թիվ 9 պաշտոնական պարզաբանման 4-րդ կետի համաձայն. «Եթե հարկ վճարողը (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում»:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Արթուր Դավթյանի 18.06.2015 թ-ի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ պետի 08.06.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 284790 որոշումը, իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ